ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/16441-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1280-10.03.2026-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ նաև «Օրենսգիրք»)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին այլևս հղում չի կատարվում:
2. Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում «3.1-րդ» գրելաձևը փոխարինել «3.1-ին» գրելաձևով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձևը:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ